



Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի իրավունքի բաժնի վարիչ
(իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

Գառնիկ Հրաչիկի Սաֆարյանը ծնվել է 1951թ. հոկտեմբերի 24 -ին Երևան քաղաքում, բանվորի ընտանիքում:

1970-1972թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1972-1978թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ստացել է «իրավաբանի» մասնագիտությամբ բարձրագույն կրթության դիպլոմ:

Ուսումնասիրությունը զուգորդել է աշխատանքային պրակտիկայի հետ: 1976 -1990թթ. աշխատել է որպես ավագ իրավախորհրդատու «Հայէլեկտրոմեքենա» և «Հայէլեկտրաապարատ» արտադրական միավորումներում, իսկ 1990-1994թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում որպես ավագ գիտաաշխատող, համատեղության կարգով աշխատել է նաև ՀՀ Գերագույն Խորհրդում որպես գլխավոր փորձագետ, իսկ 1994թ. հունիսից մինչև 1998թ. օգոստոսը աշխատել է ոստիկանության ակադեմիայում, որպես ամբիոնի պետ: 1998թ. օգոստոսի 5-ից մինչև 2007թ. օգոստոսի 31-ը գլխավորել է ՀՀ գլխավոր դատախազության Գիտաուսումնական կենտրոնը: 2008թ. սեպտեմբերի 1-ից մինչև այժմ հանդիսանում է Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի «Պետության և իրավունքի տեսության և պատմության» ամբիոնի վարիչ:

1990 թվականին պաշտպանել է թեկնածուական, իսկ 2002թ. մայիսին դոկտորական ատենախոսությունը և ստացել իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է միջնադարի հայ իրավաբանական մտքի լուսաբանմանը, իսկ դոկտորական ատենախոսությունը՝ Հայաստանի երրորդ Հանրապետության իրավաստեղծ գործունեության, ինչպես նաև օրենսդրական համակարգի կատարելագործման հետ կապված հիմնախնդիրների տեսական և կիրառական վերլուծությանը:

Մենագրություններն են՝ «Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության

զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» /2004թ./, «Հայաստանի միջնադարյան իրավունքը» /1996թ./, «Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր» /համահեղինակությամբ/ /2001թ./, «Հայ իրավաբաղաքական միտքը 11 - 13 -րդ դարերում» /1995թ./, «Իրավունքի տեսության հիմնահարցեր» /համահեղինակությամբ/ /2003թ./, «Հռոմեական քաղաքացիական /մասնավոր/ իրավունք» /1996թ./ «Հռոմեական իրավունք» /համահեղինակությամբ/ /2002թ./ «Միջնադարյան հայ իրավունքը և իրավաբաղաքական միտքը X-XIIIդդ.» /2008թ./: Ընդհանուր առմամբ 13 մենագրության և ուսումնական ձեռնարկների և 36 գիտական հոդվածների հեղինակ է: Գառնիկ Սաֆարյանը իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է: